


ՖԱՐԻՄԵԱՆՑ ՀՐԶԱՆ



Հայերը, իբրև կազմակերպեալ Գաղութ, Եգիպտոսի մէջ զոյգութիւն ունեցած են ժՄ. զարուն երկրորդ կէտէն յետոյ միայն:

Այդ միջոցին, Յաթիմեան Հարստութեան ատեն, իբր ամբողջ գար մը (1074 — 1177), Հայ Վարդեր (վեզիր) կարեւոր մասնակցութիւն մ'ունեցան Եգիպտոսի քաղաքական և զինուորական վարչութեան մէջ:

Հաւանաբար, գլխաւորապէս անոնց քաջակերութեամբ և ազդեցութեամբն էր որ Հայ Գաղութը բարգաւաճ դրութեան մը տիրացաւ Նեղոսի հովիտին մէջ, եկեղեցական և ազգային տեսակէտով:

Այդ թուականէն է նաև որ կ'սկսի Հայ Եկեղեցիներու յիշատակութիւնը Եգիպտոսի պատմութեան մէջ:

Մեր պատմիչները կ'աւանդեն թէ ժՄ. զարու վերջերը, Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոս այցելելով Եգիպտոս, տեղւոյն Հայ գաղութին համար, որ, ըստ Մատթէոս Ուսնայեցի Հայ պատմադրին, այդ միջոցին 30000 ընտանիք(?) կ'հաշուէր, Արքեպիսկոպոս ձեռնադրեց իր քեւորդին, Ծովքի Իշխանին որդին, Գրիգորիսը, և Եկեղեցիներ և Վանքեր շինեց հոն:

Հայոց պատմութեան այս հակիրճ տեղեկութիւնը կ'ամբողջացնեն երեք Եգիպտացի պատմիչներ. Աբուսահլ, որ ժ.Բ. զարու վերջերը ապրած է, և Մաքրիզի կամ Թադիասին, որոնց ծանօթութիւնները անգլիերէնէ թարգմանելով Հ. Ղ. Ալիշան համառօտ տեսրակի մը մէջ հրատարակած է